

այնմ հաւտի խաշանց, որ զպահպանութիւն շանցն՝ պահողաց պահապանացն, ի բաց մերժեցին, եւ կամաւք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին արթնացւոց քաղաքին:

7 Յայնմ ժամանակի զթագաւորն իւրեանց արինակ չարի առնէին, եւ նովին<sup>1</sup> արինակաւ ձեւել սկսան, եւ նոյնպէս գործել: 8 Չի ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իբրեւ զկրաւնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց՝ եւ ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ: 9 Ոչ եթէ որպէս պարտն էր՝ զհիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: 10 Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին այլ խառնադանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինականութեանն, եթէ զցայգ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ գյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի, եւ ոչ դոյզն յիշատակ ինչ, եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէին, եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի: 11 Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անաւգուտս եւեթ զբաւսեալ էին. զոր արինակ մանկունք տղայք ընդ մանգութեանն եւ ընդ տղայութեանն խաղալիկ խանկարեալք, եւ զպիտոյիցն եւ զկարեւորացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս եւ դէգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժարուժ միտս ունելով: 12 Եւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, եւ նմին հաւատացեալք, եւ ի նոյն հանապազորդեալք, ի հեռ եւ ի նախանձ ընդ միմեանս չառակնութեամբ, թշնամութիւն ոխութեանց, զմիմեանս խաճատել, եւ նենգել այր զընկեր եւ զեղբայր: 13 Սիրելիք սիրելեաց, եւ մերձաւորք մերձաւորաց, եւ ընտանիք ընտանեաց, ազգականք ազգականաց, ինամիք ինամեաց դնէին գայթակղութիւն:

14 Անդ էր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալք ըմպելով, ոգովք չափ գային վնասուցն՝ անխրատ վարս եւ անհանճար միտս ունելով: 15 Եւ զդիցն հնութեան պաշտամունս ի նմանութիւն պոռնկութեան գործոյն ընդ խաւար կատարէին. եւ ոմանք զնոյն իսկ ցանգութիւն գիջութեան պոռնկութեան կատարէին յանձինս իւրեանց: 16 Վասն այսորիկ ոչ զխրատ իմաստութեան լսէին, եւ ոչ առաջնորդացն ասելոյ զկատուծոյ պատգամն անսացեալք հնազանդէին. այլ վասն ի նոցանէն յանդիմանութեանն՝ ատէին եւ հալածէին զնոսա եւ սպանանէին: 17 Եւ ըստ մարգարեական բանին առ նոսա

1 Յօր. միում՝ նորին